

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւրմէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տողը
20 սւնիքով



ՀԱՍ

Redaction & journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редация

на ВѢСТНИКЪ

иравуни“

ВАРНА

Գրոշրոշիւք եւս չեն տրոշիր

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՃՈՐԵՔԴԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՐ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ

—*—

Հոգաբարձութիւնս կը փութայ յայտարարել արգոյ հայ հասարակութեան թէ՛ յառաջիկայ հինգշաբթի օր, մեր ազգային կեանքի և անոր պատմութեան էն մեծ և յուզիչ դէպքին տարեգրութիւնը, որ կազմուած է Ամերիկացի նշանաւոր գրագէտներէ և հայաստէններէ:

Ներկայացուցող տեղի պիտի ունենայ վաղը հինգշաբթի գիշեր, Վարդանանց տօնին առթիւ, Պուլկարիա Սրահին մէջ: Տոմսակներու գիները ևս գիւրամատչելի ըլլալով, վստահ ենք թէ երկուսն հայ հասարակութիւնը խոսուն բազմութեամբ ներկայ պիտի գտնուի, որով թէ ազգային մեծ տօնը շքեղօրէն տօնախմբած կըլլայ եւ թէ սուրբ Դատին պաշտպանութեանը նպատակը:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ. Երկսեռ. վարժարանաց (Կնիք)

Ա.Զ.Գ.Ա.Յ.Ի.Ն. ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Հոգաբարձութիւնս կը փութայ ծանուցանել արգոյ հայ հասարակութեան թէ՛ ի նպատակ Ազգային վարժարանաց տրուելիք պարահանդէսը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Ուրբաթ գիշեր, 10 փետր. Զինուորական Բլիւպին մէջ:

Յուսալից եմք որ պատուաւոր ժան ազգայինք բազմաթիւ աղքատ և որբ մանուկներու կըթուծեան գործը ապահովելու մեր այս ձեռնարկը պիտի հաճին քաջալերել իրենց օժանդակութեամբ:

Տոմսերու գիներն են Ա. ըստ կամս և Բ. 10 ֆր.

Ի Դիմաց Հոգաբարձութեան (Կնիք)

Ա.Զ.Գ. ՇՔԵՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ի ՆՊԱՍՏ

Հայկական Դատի բոքաւանտին ու պաշտպանութեանը զոր յանձն առած է Պաթոն հրատարակուող ԱՐՄԵՆԻԱ թերթին խմբագրութիւնը, որ կազմուած է Ամերիկացի նշանաւոր գրագէտներէ և հայաստէններէ:

Ներկայացուցող տեղի պիտի ունենայ վաղը հինգշաբթի գիշեր, Վարդանանց տօնին առթիւ, Պուլկարիա Սրահին մէջ: Տոմսակներու գիները ևս գիւրամատչելի ըլլալով, վստահ ենք թէ երկուսն հայ հասարակութիւնը խոսուն բազմութեամբ ներկայ պիտի գտնուի, որով թէ ազգային մեծ տօնը շքեղօրէն տօնախմբած կըլլայ եւ թէ սուրբ Դատին պաշտպանութեանը նպատակը:

ԻՍ ԿԱՐԾԻՔԸ

Ժամանակէ մը ի վեր պուլկարահայ մամուլը կը գտնայ Պուլկարիոյ մէջ Առաջնորդական աթոռ մը հաստատուելու խնդրին շուրջը, որը մեր մէջ միջավայրի տեսակետով զուրկ չէ շահագրգռող հանգամանք մը ունենալէ: Խնդիրը իր այժմէութիւնը ունենալով աւելորդ ըլլալէ աւելի օգտակար է անով զբաղելու կարծեմ:

Պուլկարահայուն Առաջ. աթոռ ունենալու պէտքը ուրանալ չէ նպատակս որքան հասկցնել թէ պուլկարահայ բարոյական կեանքին այս զօրաղդ պայմաններուն մէջ առաջնորդ մը, որքան ալ իր պաշտօնի մարդը ըլլայ, պիտի կրնայ օգտակար դառնալ պուլկարահայ գաղթականութեան համար. ահա բուն հարցը որուն առջեւ պէտք է կանգ առնենք վայրկեան մը:

Անոնք որ մոտէն ուսումնասիրած են պուլկարահայուն հանրային կեանքը, անոնք որ առիթը ունեցած են միշտ շփումներ ունենալ անոր ներկայացուցիչը համարուող ազգ. մարմիններու հետ չեն կրնար ըստ մեզ լաւատես ըլլալ թէ առաջնորդ մը

պուլկարահայ գաղթականութեան համար օրհնութիւն ըլլայ:

ԱՅՏԱՐԵՆՔ

Առաջնորդ մը որքան ալ իր կոչումին նուիրուած անոր սիրովը վառուած լուրջ, գործունէս մարդը ըլլայ բնականաբար ժողովրդին հետ պիտի գործէ, այսօր Պուլկարիոյ մէջ ունինք հոգաբարձութեան ու թաղականներ, շատ քիչ բացառութեամբ, մարդկութեան տարրական պարտականութիւններէն իսկ զրկուած, որոց ետին սակայն կայ բաւական ստուար մեծամասնութիւն մը անդիտակ—թեթեւամտ մարդերու որոնք չեն զգուշանար ամենէն խարդախ ամենէն զոհիկ միջոցները ի գործ դնել ի նպատակ իրենց ընտրելիներուն: Միւս կողմը ունինք կուսակցութիւններ հիւանդոտ կուսակցամոլներէ կազմուած որոնք նոյնքան վեհապարկ կըլլան շարունակ յառաջիմական քայլեր առնելու իրենց անձարակ փութկոտութիւններով եւ իր յառաջիմութեան պաշտպան հրապարակի վրայ ազգին է՛ն հարազատ, է՛ն սրտցաւ զաւակը երեւնալու իրենց ախտաւոր մարմանովը: Անդին չէզոք ըսուած մաս մ'ալ կայ ուղղամիտ եւ դիտակից մարդոց բայց անոնք ալ անտարբերութեան վերաբերելով փաթթուած ըստոյիկեան անտարբերութեամբ մը կը դիտեն իրենց շուրջը կատարուած անց ու դարձը: Խնդրեմ ըսէք այս կարգի զօրաղդ պայմաններու մէջ զանազան ժողովրդի մը մէջ առաջնորդ մը որքան օգտակար կրնայ ըլլալ:

Յետադիմական թաղականը.—հոգաբարձուն թեւադրուած իրենքէն չը պիտի ուզէ նշանախեց մը անպամ փութել իր հին—գրեւ համոզումներէն, յեղափոխական կուսակցութիւնը իր կուսակցական նեղ ու ճղճիմ հաշիւներէ առաջնորդուած պիտի երկնցնէ իր կանգունը առաջնորդին ձեռքը եւ պիտի ուզէ որ առաջնորդը իր կանգունովը չափէ ու ձկէ: Եթէ գործին սիրոյն, կամ սկսած ձեռնարկ մը չը վիժելու համար, առաջնորդը փորձութիւնը ունենայ համակերպութիւն ցոյց տալու արտաքուստ, անդին ուրիշ կուսակցութիւն մը չը պիտի ուշանայ խօսքով ու գրով յարձակելու առաջնորդին վրայ անպատկառօրէն: Փորձերը շատ անգամներ ցոյց տուած են իրենց ապացոյցները, թէ ան շատեր իրր զարացում պիտի աճապարեն պատճառներ քնել այս մասին:

Կը կրկնեմ առաջնորդ մը որչափ

ալ պարտաճանաչ ու իր գործին սիրոյն համար իր անձը զոհաբերող մէկը ըլլայ չը կրնար երբէք օգտակար ըլլալ թեթեւամտ, յանձնապատասխան—չը պիտի ուզեմ ըսել քիչ մ'ալ անկիրթ—համայնքի մը մէջ: Զօրապետ մը որքան ալ ռազմագէտ որքան ալ անձնագոհ հայրենասէր մը ըլլայ, չը կրնար ի գործ դնել իր օգտակար յատկութիւնները եւ յաջողցնել իր ծրագիրները երբ կը գտնուի ըմբոստ, անկանոն եւ անկարգապահ բանակի մը մէջ: Երբ կը տեսնէ թէ իր հեղինակութիւնը չը յարգուիր կը լքէ վերջապէս գործ ու պաշտօնը: Իրաց այս վիճակին մէջ ի՞նչ պիտի ընէ պուլկարահայ առաջնորդը, պիտի ներքէ՞ իրեն որ իր ձեռքը տրուած հսկողական զաւագանքը թիւ դառնայ, վերջապէս պիտի թօթափէ իր ոտքին փոշին ըսելով «այս այս ոչ իւրեք ելանէ այլ միայն պահովք եւ աղօթիք» ու առնէ քալէ:

Դիտեմ առարկոյներ պիտի գտնուին թէ՛ բոլիշ ի՞նչ պէտք առողջներու համար՝ բայց չուշանանք պատասխանելու այնպիսիներու թէ ի՞նչ օգուտ բոլիշի դեղ ու դարմանը այն հիւանդին որ գիտնալով հանդերձ իր վատառողջ վիճակին ծանրութիւնը պիտի յամառի բոլիշի խնամոտ հրահանգներուն չանաւ ու պիտի ակնկալէ իր ապաքինումը վնուկ Ջաքո պառաններէ, թոյնէն կեանք ըստպատող յիմարի նման:

Սխալ չը հասկցուի. Առաջնորդնորդական աթոռի մը գոյութիւնը Պուլկարահայերու համար օղի ջուրի չափ կարեւոր ու անհրաժեշտ պէտք մըն է, ժանաւանդ ազգ. պայտօնեանիւրուս որոնց ճակատագիրը կարգ մը անհեթեթ թիփերու ձեռքը խաղալիք կը դառնայ:

Սյո՛, ուրիշ շատ մը գործերու հետ ուրիշ շատ մը խնդիրներու բարեւաւ կարգադրութեանը հետ կարգադրուած պիտի ըլլայ նաեւ կրթական գործը իր պաշտօնին գիտակից խելահաս ու կարող անձնաւորութիւններէ կազմուած Ուսումնական Խորհրդի մը կազմութեամբ, ի մի բան արմատական յեղաշրջում մը ենթարկուած պիտի ըլլայ պուլկարահայ կեանքը:

Իր երակացութիւնն պիտի խնդրէի «Իրաւունք» ի եւ «Իրաւունք» պատ. խմբագրութիւններէն որոնք ամենէն աւելի եռանդ եւ փութկոտութիւն ցոյց կուտան առաջնորդական այս կենսական հարցին, առաջինը իր չէզոք եւ անկողմնակալ ու երկրորդը իր կիսապաշտօնական օրկան կուսակցութեան մը ի-

րենց իմացական եւ բարոյական միջոցներով ջանքեր ընեն իրարու մօտեցնել իրենց բարոյական ազդեցութեան տակ գտնուող երազմէ անջատուած այդ տարրերէ. առողջ և ուղիւթեան մը առաջնորդելով զայնքս : Այն ատեն կը հաստատ լիկ պրելիարական պահն ձեռնարկ պիտի անենայ իր կանոնաւոր եւ պարբերական ընթացքը եւ պիտի պայտաւրէ իր լաջողութիւնը , հակառակ պարագային մեր այս ինկած պայմաններուն վէջ պտաջնողական աթոռ չէ հայրապետական աթոռ հաստատենք չը պիտի կրնանք մեր բաղձալի իսէալին հասնիլ :

Այս է իմ կարծիքը :

ԱՐԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ

3 փետր. 1906

Թ. Փաշարճըգ.

ՀԱՅԱՆՊԱՍՏ ԿԵՄԱԿԱՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Մեր ընթերցողներուն արդէն ծանօթ է Եւրոպայի նշանաւոր քաղաքագէտներու, քաղաքագէտներու, եպիսկոպոսներու, ծերակուտակներու, երեսփոխաններու եւ նախկին նախարարներու կողմէ նախագահ Բուզիլէթի ուղղուած խնդրագրին պարունակութիւնը : Այդ խնդրագրին հետ Մ. Ճ. Պ. Բէյնօլտս իր կողմէ հետեւեալ բացատրական նամակն ալ նախագահին մատուցած է .

Տէ՛ր, ահաւասիկ կը ներկայացնեմ խնդրագիր մը զոր Պ. Պերթլուն գըրած է եւ ոտորագրած են 31 ծերակուտակներ , 25 պատուիրակներ՝ Յրանսայէն , 2 ծերակուտակներ եւ 11 պատուիրակներ՝ Իտալիայէն , 2 ծերակուտակներ եւ 47 պատուիրակներ Պէյնթիայէն : 1 պատուիրակ՝ Շուէտէն , 7 պատուիրակներ՝ Տանիարգայէն , 14 Անգլիացի եպիսկոպոսներ , 51 համալսարանական փրօֆէսորներ եւ շատ մը նշանաւոր քաղաքացիներ Նորվեգիայէն , Շուէտէն , Տանիարգայէն , Հոլանտայէն , Յրանսա-

յէն , Գերմանիայէն , Աւստրիայէն , Իտալիայէն , Անգլիայէն . Սկովտիայէն եւ Իռլանտայէն : Չատ զատ ստորագրողներու մէջ կը գտնուին Նախէն Պերթլուն , Երբեկեայէն , Ճէն Պոլթն , Սալվէյըն Արթին Ներկայացող Լայպցիկի հայրապետէն , փրօֆէսոր Վոլքմար փրօֆ. Լարթն , Ժաւ Բրաքեթ , Պրոֆ. Զալէվի , Պոլթն եւ Պրան Ծրանսայէն : Ծրանսայէն պատուիրակներուն մէջ կը գտնուին Ծրանսական Ակադեմիին 5 անգամները , եւ 15 անգամները Էնսիքիթը օգ Յրանսին , Ասոնք միասնաբար կը դիմեն ձեզի , հաւատարմ թէ ամբողջ Եւրոպայի մէջ վայելած ձեր բարձր յարգանքը եւ քաղաքական նախաձեռնի ձեր հետաւորութիւնը անգուցականօրէն կը յարմարեն զձեզ իրենց բողոքները քերականացնելու :

Պ. Պերթլուն չի խնդրեր ձեզմէ յատուկ բան մը ընել այլ կը նախաձեռնէ ձեզի թողուլ որոշումը , թէ ինչ կերպով գործելու էք : Կը համարձակիմ սակայն մատուցանելու ձեզի երկու թելտրուութիւններ , որոնք արդեն եւ Յրանսայի , Անգլիոյ եւ Գերմանիոյ հայապէսներու հետ ունեցած խորհրդակցութիւններու , քաղաքագէտի :

1. Որ զուգ հայաստանի խնդրը լուծելու համար յովորդ համաժողովին մէջ խորհրդակցութեան առնուելը ապահովէք : Պոսթոնի Յրանց օգ Արմէնիէն ի պաշտօնեաները սրտազին կերպով կը բաղձան ասոր :

2. Որ զուգ մասնաւոր վեհաժողով մը հրաւերէք Հայկական Դատը վերջացնելու կամ մասնաւոր կողմէ ընէք Եւրոպական պետութիւններուն , որպէսզի մէկտեղ գան ու Պէրլինի զաշնագրութեան գործելու միջոցները եւ կերպերը որոշեն , կամ խնդրը ուրիշ կերպով մը կարողանան :

Թիւրք հիւպատոսներու Կովկասէն Կ. Պոլիս զրկած այն սուտ լուրերը , թէ Հայերը կը ջարդեն թուրքերը , սոսկումով լեցուցեր են Հայերը որոնք կը վախճան թէ մի գուցէ այս սուտ լուրերը յերիւրուին , Տաճկաստանի մէջ ջարդերու նոր թուական մը բանալու համար :

Թոյլատրեցէք որ ցոյց տամ նաեւ թէ հիմա որ ծայրագոյն Արեւելքի խնդիրը վերջացած է , Եւրոպական խաղաղութեան մշտական վտանգը Փոքր Ասիոյ մէջ կը մնայ : Եթէ

այն մեծ գործը զոր կատարած էք արդէն յիշատակ այս շարունակ պատերազմ սպառնացող խնդրոյն լուծումով , դուք աշխարհի տեւական խաղաղութեան համար ողբէ ձեռնարկ անելուն մը պիտի ընէք եւ պիտի երաշխաւորէք միջոցաւոր դժբաղդ Հայերու համար այնպիսի հանգագութիւն մը , որուն նման չեն տեսած երբեք :

Ամերիկայի Կրուս Ռարիս քաղաքէ մեզ հասած նամակ մը հետեւեալ տողերը կը քաղենք :

«Մտ օրեր քաղաքս րոգհանուր ժողով մը պիտի գումարենք ամերիկացիներու նախաձեռնութեամբ , կարող խօսողներ պիտի հրաւիրուին . նաեւ քաղաքս ամբողջ բարձր դասակարգը պիտի կանչուի : Նպատակը պիտի ըլլայ նշանաւոր ամերիկացիներու կողմէ աղերսադիր մը ներկայացնել նախագահ Ռուզվելթին հայ դատին համար : Բնական եմ որ պիտի յաջողինք սայն ժողովը պէտք եղածէն աւելի փայլուն ընելու եւ կարող խօսողներ բերելու , ասոր համար 100 տոլար ծախք մը կըլլայ : Առաջին անգամ է որ այսօրինակ ժողով մը պիտի պիտի ունենայ այս քաղաքս .

Երբ ժողովը ըլլայ եւ ինչ տպաւորութիւն որ թողու իրկողով մը կիմացնեմ :

ԿՈՎԿԱՍՏԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻ Ժամանակաւոր ընդհանուր նահանգապետը հետգրում է յունուարի 23 րդ . « Երեկ Ղազարի գաւառի Ուզունթալայի ուսուցիչ հայերը կըրկ տուին Ձափարի գիւղի մի մասը եւ քիչերն մօտ ջրան գլուխ տաւար : Երբ մօտս լուսնները այրեցին խանութները : Ուզունթալայ կայարանը , ջրաղացը եւ Լալիքեհ գիւղի մի մասը քիչերն տաւար : ուղարկուած հարիւրեակը մի քանի զաւլ տուեց հայերի վրայ , այս ըստէն թշնամի կողմերն Ուզունթալայի դիրքերը վրայ են . սպասում են նոր ընդհարումներ » :

ԲՈՐՁԱԼՈՒԻ Գաւառում Համամուլ գիւղի զինուած թուրքերը յարձակո-

ւել եւ Թալանէլ են Դասանի պանտալոնները , նմանապէս եւ զուրթերապաշտ քողաքացի Ռեհեդիկա Ռաբրի կայրուածը :

ԹԻՖԼԻՍ

Պետական Դումայի մէջ Կովկասի ունեւայիք մասնակցութեան վերաբերմամբ գրաք Վիտալի Նախագահութեամբ պիտի ունեցած խորհրդակցութեան մէջ ընդունուած էր մի ծրագիր որն եւ ուղարկուած էր Կովկասի փոխարքայի եղրակացութեան : Այդ ծրագրի համաձայն , ինչպէս հաղորդում է «Ռուս Վէստ» , Կովկասում իրաքանչիւր 350 հազար բնակչութիւնից ընտրուում է մի պատգամաւոր : Այսպիսի պայմաններում Դումայի մէջ Կովկասի մուսուլմանները ունենալու են 11 պատգամաւոր , վրացիները — եւ հայերը — 5 : Բազու քաղաքն ուղարկում է 2 պատգամաւոր մէկը մուսուլման եւ միւրը հայ . Բազու նահանգը նոյնպէս երկու պատգամաւոր , բայց երկուսն էլ մուսուլման :

Ռուսական Սինոդում , ինչպէս յայտնի է , ընկուած էր վրաց եկեղեցու անկախութեան խնդիրը : Ներկայումս Պետերբուրգի տեղեկութիւն է ստացուած թիֆլիսուէ , որ այդ եկեղեցի լուծումը չեղածգուած է մինչեւ համառուսական եկեղեցական համագործակցութեան : Սինոդը ցանկալի է համարել , որ Էքզարխատիւնը վրաստանում պահպանուի , բայց Էքզարխը վրացի լինի եւ նրան տրուեն աւելի ընդարձակ իրաւունքներ :

Շուէտի զօրավար Գոյնչապովը որուն թուրքերու նպատակաւոր եւ Հայերու անպատու ընթացքի մասին հրապարակային տրտուներն յայտնուեցան , հետեւեալ հետագիրը ուղղած է փոխարքային :

«Պարտքս եմ համարում զեկուցանելու ձեր պայծառափայլութեանը , որ քանի մը լրագիրներում սուտ տեղեկութիւններ են հաղորդուում ինձ յանձնուած զօրքի գործողութիւնների մասին եւ մի հաղորդագրութիւն էլ տրուած էր մինչեւ անգամ կանխաւ . այդ հաղորդագրութիւնը տպուած է թիֆլիսի մի լրագրում այն օրուայ լոյս գիշերը : Երբ զօրքն իսկապէս գործում էր Շուէտ մօտ , եւ հաղորդուած են այնպի-

ՍՈՒԼԹԱՆԸ ՍՊԱՆՆԵԼՈՒ

ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «ԱՐԵՒԵԼ»-էն)

[Շար . նախորդ թիւէն]

ԸՆԴ . ԴԱՏԱԽԱՂԻՆ ՃԱՌԸ

Առաքել բացարձակապէս ուրացաւ Սիւլիօ Բիչիի հետ յարաբերութիւն ունենալը եւ Մարիի միջոցաւ իրեն պայթուցիկ նիւթերով լեցուն ծրարներ յանձնուիլը : Ասոր վրայ երես երեսը անուցաւ Մարիի հետ : Հարցաքննութիւնները առաջ տարուեցան եւ թուղթերուն թարգմանութեան մէջ տեսնուեցան քօմիթէին հաշուական գործառնութեանց նկատմամբ կարգ մը բացատրութիւններ եւ այդ մասին կարգ մը կարեւոր եւ վնասակար հատուածներ : Ասոնց մասին բացատրութիւն պահանջուեցաւ Առաքելէ որ ընդունեց եւ հաստատեց Մարիի

յայտարարութիւնը եւ խոստովանեցաւ թէ Դոյն հրահրութիւնն ու գոյքերը ղեկ կը գտնուէին Հիւանգաւոցին մէջ պահուած : Առաքել երբ սկսած էր մանրամասնութիւնները հաղորդել , աւստրիական կառավարութեան դեսպալատան Ա. Թարգմանը տեղեկացուց թէ հիւանգաւոցին մէջ կարգ մը վնասակար նիւթեր գտնուած են : Ասոր վրայ Դոյն դեսպալատան Բ. Թարգմանին հետ հիւանգաւոց երթալով կանոնական խուզարկութեան ձեռնարկուեցաւ կատարեալ կերպով : Հիւանգաւոցին բժշկապետին ալ ներկայութեան , առաջին օգնականուհին միջոցաւ երբ գործողութեանց սրահը եւան , օգնականուհին սրահին քովի նեղ բացուածքին մէջ պահուած կողով մը ցոյց տուաւ զոր առանց վնասման հանեցին ու քննեցին Գըննիչ մարմինն անգամները : Այս կողովը որ 90 սանդիմ լայնութիւն ունէր , լեցուն էր զանազան հրանքութիւնով եւ պայթուցիկներով : Ասոնք հանուեցան մէկիկ , եւ հետեւեալներն էին . — Իւրաքանչիւրը մէկ քիւրունց 32 ծրար «մէլէնիթ» , 22 տուփ

«քարսիւլ» , երկու հատ զնդտիկ կաղապար , լաթէ փամփուշատոց մը , մը կէս մէթրի չափ երկու կտոր ճերմակ պատրոյգ , հրազէնի 42 փամփուշտ , հրանքները պայթեցնելու յատուկ հարիւրէ աւելի քարսիւլ , «պոմպա»ներու յատուկ 9 հատ «ֆոնիա» երեք հատ պատրաստութեան գործիք , բռնկումը ի գործ գնելու համար շինուած 9 հատ դեղաւոր թուղթ , «նիթրօ-կլիսթէրին» շինուած տինամիթի խիստ սոսկալի եւ սպանիչ 5 կրամ բամպակ , երկու կարմիր , 3 սեւ եւ հինգ ճերմակ պատրոյգի ճախարակներ , 8 ծրար «քլորաթ տը բոթաս» , վառարկալի մը , 9/2 օխտ որսի վառօղ , 2 օխտ քարահանքի վառօղ , կէս մէթրի չափ երկու կտոր ճերմակ պատրոյգ եւ երեք փամփաթ ծովային ականի պատրոյգ : Այս ամէնը ըստ օրինի գրաւուելով զրկուեցան թնդանօդարան եւ զգուշութեան համար հիւանգաւոցին ուրիշ մասերուն մէջ ալ երբ խուզարկութիւն կատարուէր , դիտուեցաւ որ հիւանգաւոցին պարտէզին մէջ եւ կարգ

մը տեղեր նոր փորուած ըլլալու երեւոյթ մը ունէին : Այս դիտողութեան վերաբերեալ արձանագրութեան զիրը պատրաստուելով , յիշեալ տեղէն մեկնեցաւ Գըննիչ մարմինը :

Եղեռնական արարքին մէջ Առաքելի մասնակցութեան մասին անոր հարցաքննութիւնները առաջ տարուեցան , երբ Առաքել խոստովանեցաւ թէ յեղափոխական ընկերութեան անդամ էր «Դրօշուկ» լրագիրը բերել տալով կը կարդար , որով քօմիթէին բոլոր եղեռնական մտադրութեանց եւ գործերուն տեղեկ էր : Առաքել ըսաւ թէ կայս . կառավարութեան կողմէրդ եւ խուզարկու ակնարկէն ազատ մնալու խորհրդածութեամբ , ընդունած մէկ մասը այն առարկաներէն զորոք Սիւլիօ Բիչի բերած էր ժամանակ մը մնալէ ետք առնելու համար . սակայն Բիչի ոչ միայն ետ չէ առած զանոնք իր խոստացած ժամանակը . այլ անկէ ետք ալ եղեռնական դէպքէն մինչեւ 20 օր առաջ , սկսած է մնացեալներն բերել իրեն՝ պահելու համար :

սի գործողութիւններ, որ գործը չի էլ կատարել: Կատարուած գործողութիւնները, մասին քառամեկի զրպարտութիւն է հաղորդուած: Կը հետազոտուողները կողմէն, կողմէն, որ յանցագործները պատասխանատուութիւն կանգնեն: ձերդ ապօրինականութեանը եւ զեկուցել եմ միմիայն լոկ ձեռնարկութիւնը եւ դուրս չեմ գալիս ինձ տրուած հրահանգի սահմանից: միակերպ վերաբերուելով դէպքեր կու կողմերէն էլ: Եթէ ով եւ ի օգտակարական պէտք զաւոյստ կը չի կեն:

Թիֆլիսի դատարի ընդհանուր նահանգապետը յայտարարուած է, որ զէնք կրելու եւ պահելու համար խնդրագրերի ընդունելութիւնը, Թոյլտրական վկայականներ վրայ կնիք դնելը դադարեցրած է: Նրանք որոնք զէնք ունին, հրաւիրուած են անյապաղ յանձնել այդ զէնքը գորպնոցներին կամ կօմիտայանի վարչութեանը:

Հաշուապահական կուրսերի հիմնադիր պ. Ն. Աբրահամեան փոխարքայից Թոյլտրութիւն է խնդրում Թիֆլիսում բանալու հայկական տղայոց գիմնազիոն, ուր բոլոր առարկաները պիտի աւանդուեն հայերէն լեզուով բացի, ուսուցողները, պատմութիւնից եւ աշխարհագրութիւնից:

Երեւանի խաղաղարար անձնագործի անդամները հեռագրով խնդրած են փոխարքայէն, ի դիմաց Երեւան նահանգի հայ եւ թրքեր բնակչութեան, որ փութացնէ այս երկու ազգեցեալ կողմէ Տիֆլիս գումարութիւնը հաշմագործը, որովհետեւ երկրի խաղաղութիւնը ատկէ կը սպասուի: Սակայն Պագուէն մի քանի առաջնակարգ թուրքեր առաջարկած էին այդ համագործողի յետաձգումը, առարկելով թէ քանի որ Բեդերասպուրկի մէջ ի մօտոյ պիտի գումարուի ընդհանուր Ռուսիոյ իսլամ տարրերուն համագործողը, աւելորդ է կովկասի մէջ հայերու եւ իսլամներու համագործող մը գումարել:

Բայց մէկ քանի թուրքերու այս անտեղի առարկութիւնը չենք կարծեր որ փոխարքային որոշումը փոխելու կարող ըլլայ:

Առաքելի թուղթերուն եւ նամակներուն մէջ գտնուեցաւ ամբիքքան կտաւ մը, որուն վրայ «Հնչակ» յեղափոխական ընկերութեան կնիքը եւ մասնաւոր նշանը կար եւ որուն մէջ խոռվարարական լեզուով մը կը գովուէր Հաճի Նշան անուն մէկու մը քանքին ու աշխատութիւնը՝ քօմիթէին գործերուն կարգադրութեան մէջ եւ կրտսէր թէ նախագահի վկայական տրուած է յիշեալ Հաճի Նշանին: Այս պարագան հարցուեցաւ Առաքելի եւ Հաճի Նշանին ինքնութեանը մասին տեղեկութիւն պահանջուեցաւ: Առաքել խոստովանեցաւ թէ ասկէց առաջ Ղալաթիա, Բոնսոլիա խանին մէջ ճաշարանապետ եւ սակայն յետոյ Խալիլ Փաշա խանին մէջ ճաշարան մը վարձող Հաճի Նշանն էր նոյն անձը, որ ի սկզբան Հնչակ ընկերութեան պետերէն ըլլալով, յետոյ Դրօշակեաններուն յարած եւ անոնց մէջ մասնաւոր դերք մը գրաւած էր: Առաքել խոստովանեցաւ նաեւ որ Սիւլիօ Ռիչին ճանչցած է այս Հաճի

ԱԶԳԱՅԻՆ

Երուսաղէմի հաշիւները քննելու համար Պոլսոյ մէջ կազմուած Յանձնագործողը յետաձգած է նիստերը, սպասելով Եւթից տեսուչ Տ. Մատթէոս վրդ.ի դիտողութեանց իր նախորդի հաշիւներու մասին: Եթէ երկու շաբաթէն Տ. Մատթէոս վրդ. իր դիտողութիւնները չեն ըրկայացնէ, Յանձնագործողը առանց անոր ալ իր վճիռը պիտի արձակէ:

Պարսկաստանի մէջ 40 տարիներէ ի վեր պետական բարձր պաշտօններ վարող Միրզա Մարտիրոս խան Դաւիթ-Ռանեան մեռեր Թէհրանի մէջ: Հանգուցեալը իր հարստութեան մէկ հինգերորդը կտակած է հայ վարժարաններու, իսկ իր ականակուռ շքանշանները և թուրք՝ որ 600 ոսկի կարծեն, կը միան ըստ օրինի Թեհրանի Հասնապատ թաղի հայ եկեղեցւոյն:

Պ. Չեքազ կը գրէ մեզ թէ սխալ է պ. փորթուգալեանի հրատարակած այն լուրը թէ ինք մերժած է մասնակցել Կաթողիկոսական պատուիրակութեան, ճանապարհածախքի չդոյութեան պատճառաւ: Պատուիրակութիւնը երկու ծառայութիւն միայն խնդրած է (իրեն ընկերանալ պ. Պէռթըլօի ներկայանալու համար և սրբագրել կաթողիկոսական կոնդակի ֆռանսերէն թարգմանութիւնը), և ինք կատարած է տմենայն սիրով: Ուրիշ ո եւ է ծառայութիւն չէ խնդրուած իրմէ, ոչ ալ առաջարկուած է որ պատուիրակութեան մասնակցի: Ընդհակառակն, պատուիրակութիւնն իրմէ ծածուկ դիմած է Լուպէին ու Տէլքասէին, որոնց ներկայանալու համար ճանապարհածախքի պէտք չը կար բնաւ:

Նշանին միջնորդութեամբ, եւ նոյն հրահանգներն ալ դարձեալ այս Հաճի Նշանին միջոցաւ եւ կարգադրութեամբ էր որ Սիւլիօ Ռիչի կողմէ իր քով փոխադրուած եւ պահուած էին:

Երբ հարցուեցաւ Առաքելի թէ հիւանդանոցի պարտէզին մէջի պեղումները ինչ էին, ան պատասխանեց թէ, զգալով որ օսմ. կառավարութեան պաշտօնեաներէն կը հետապնդուի եւ նստած սենեակը խուզարկելու համար պաշտօնական բանակցութիւններ տեղի կ'ունենան, եղեռնական գոյքերը բնաջինջ ընելու համար փորած էր պարտէզին մէջ այդ տեղերը, ուր պիտի պահէր եւ ոչնչացնէր զանոնք, բայց տեղի ունենալիք հետապնդումներէն եւ խուզարկութիւններէն, եւ դուրսն ալ իր վրայ կատարած լուրջ լրտեսութենէն ինքզինքը զգոյշ պահելու համար մէկ կողմ թողուց նոյն նիւթերը փորուած տեղերը զննելու գաղափարը, ի վերջոյ համոզելով իր 13 տարեկան աղջկը Մարի Նահապետեանը, որ հիւանդա-

ւանայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը Տիֆլիսէն մեկնած է Էջմիածին:

Կարսի հայոց վարժարանները ու կալուածները կառավարութիւնէն ազդէն յանձնուած ըլլալով, վարժարանին բացումը տեղի ունեցած է խիստ հանգիստաւոր կերպով:

Պոլսոյ մէջ հայ աղջիկ մը յունաց պատրիարքարան դիմելով փափաք յայտնել է օրթոտօք կրօնքը ընդունելի, ամուսնանալու համար յոյն երիտասարդի մը հետ:

Տ. Խոսրով Տէմիրճիպաշեան շաբաթէ մը ի վեր կորսուած է Պոլսոյ մէջ: Ոմանք կը կարծեն թէ անձնասպան եղած ըլլայ, հետքը չէ գտնուած:

Ամերիկայի Աստուածաշունչի ընկերութիւնը կրտէ, «Կոյրերու յատուկ Ս. Գրքէն ամբողջ Մարկոսի աւետարանը տպած ենք հայատառ թուրքերէն, և հիմա նոյնը կը պատրաստուի Հայերէն, և կակկալուի թէ պիտի աւարտի ընդհուպ Սեփ. ու ըրախութեամբ պիտի ղրկենք ուր որ անոնք կրնան գործածուիլ և ազատ կոյրերու՝ բոլորովին ձրի, Կոյրերու բարեկամներ կատարեալ ազատութեամբ կրնան խնդրել զանոնք կամ միսիօնարներու ձեռքով և կամ գրածախներով միջոցաւ եւ կամ ուղղակի մեզ գրելով:

Սղերդի որը տղոց համար Պատրիարքարանէն օգնութիւն խնդրուած ըլլալով, նպաստից Յանձնագործողը որոշեց յանձնարարել որ տեղացի յարմար ազգայնոց քով ղետեղեն այդ որբերը, քանի որ նոր որբանոցներու բացման համար կեղծոնը չունի այլեւս դիւրութիւններ:



Նոցի վարչութիւնը մասնաւոր արտօնութեամբ իր քովը կը բնակէր, յաջորդեցաւ հրանութեան այդ կողմերուն մէջ ղետեղել եւ վրան ալ աղջկանը զասագիրքերը դնելով ի. յարկը գտնուող վիարուժական արան քովի բացուածքին մէջ փոխադրել ու պահել իր թէ անոնք իր աղջկանը զասագիրքերն էին, որպէսզի իր սննեակին խուզարկութեանը ատեն զանոնք չտանէին օսմ. պաշտօնեաները: Իսկ պարտէզին մէջ պատրաստուած փոսերը գոցելու եւ իրենց նախկին վիճակին վերածելուն գալով: Առաքել յայտարարեց որ ժամանակ չունեցու իր վրայ ի գործ դրուած խիստ լրտեսութեան ազդեցութեամբ:

Առաքելին այս խոստովանութիւնը կանոնական խուզարկութեան եւ դիտողութեանց արդիւնքին համապատասխան նկատուելով, ձեռնարկուեցաւ Հնչակ ընկերութեան նախագահի վկայականին արժանացող խոհարար

ԳՆՈՐՀԱՔԱՆԻՔ

Աղք. Ընկ. Դործ. Ժողովը շնորհակալութեամբ ստացած է յունուար ամսոյ մէջ հետեւեալ նուիրատուութիւնները:

Բրովաթի ազգայններէն Տիկ. Էպ. րուհ Մհ. Յովհաննէսեանէ կան կարասիներու արժէքը 30 ֆր. Տ. Տ. Մկրտիչ Գաֆաֆեան կնքահայրութեան առթիւ 10 ֆր. 10 սանդիւ: Սարգիս Իւրտեան Մ. Մուսուրի առթիւ 10 ֆր. Դերասանապետ Արշակ Պէրլեանէ 10 ֆրանք:

Անուան տնտեսութեանց առթիւ Տ. Տ. Կարապետ Փափազեան 5 ֆր. Կարապետ Աճէմեան 5 ֆր. Կարապետ Յակոբեան 3 ֆր. Մկրտիչ Պողոսեան 3 ֆր. Պաղտիկ Ժիլէրեան 3 ֆր. Կարապետ Ղազարեան 3 ֆր. Կարապետ Շիրինեան 2 ֆր. Մկրտիչ Տէր-Խաչատուրեան 2 ֆր. Կորապետ Մանուկեան 2 ֆր. Աւետիս Զարպանէլեան 2 ֆր. Մուրատ Մանուկեան 2 ֆր. Կորապետ Իւրտեան 2 ֆր. Սարգիս Էլվանեան 2 ֆրանք. Յակոբ Մարգարեան 1 ֆր. Աւետիս Մելիքեան 1 ֆր. Կարապետ Բէշլէկեան 1 ֆրանք. Սարգիս Մըսրիսեան 1 ֆր. Սարգիս Կիրակոսեան 1 ֆր. Կարապետ Մարգարեան 1 ֆր. Զարսանեաց առթիւ Տ. Տ. Մերիճեան Մկրտիչեան 4 ֆր. Անդրեաս Եսփրուեան 2 ֆր. Յովհաննէս Մանուկեան 2 ֆր. Խաչիկ Կարապետեան 0.50 սանդիւ:

Նուիրատուութիւն: Արժ. Տէր Յակոբ Բահնյ Տէր Յակոբեան 5 ֆր. Գէորգ Հալաճեան 2 ֆր. Թադէոս Պախալեան 2 ֆր. Մանուկ Տէօնպէլէկեան 1.50 ֆր. Ոմն 1 ֆր. Արասչէս Թալճեան 1 ֆր. Պաղտասար Մանուկեան 1 ֆր. Վաղարշ Բէօլէեան 1 ֆր. Ընդհանուր Դուսար 125 ֆր. 10 սանդիւ:

Այս առթիւ կը փութամք հրապարակաւ յայտնել մեր անկեղծ շնորհակալութիւնը Տ. Տ. Միհրան Սեդրակեանի եւ Հրանդ Գարաբօջեանի, որք բարեհաճեցան ի նպաստ Ընկերութեանս սարքուած թատերական երեկոյթին առանց ո եւ է վարձք ստանալու Ընկ. եանտ տրամադրութեան տակ զնել իրենց սրահը. (ուրկէ Պէրլեանը աւել օգտուեցաւ):

Եւ նոյնպէս Տ. Տ. Միքայէլ Համբարձումեանի եւ Գէորգ Հալաճեանի որք ամէն ջանք ի գործ ղրին ի նպաստ

Հաճի Նշանի ձերբակալման եւ անոր խանութին ու տան խուզարկութեան: Հաճի Նշանի տան ու խանութին մէջ ո եւ է ուղադրաւ բան մը չտեսնուեցաւ եւ առաջին հարցաքննութեան մէջ ալ յայտնեց թէ յեղափոխական գործերէ, խոռվարչի պարագաներէն եւ ձեռք բերած նախագահի ղրիքէն բացարձակապէս տեղեկութիւն չունի: Բայց երբ Առաքելի հետ երես երեսի բերուեցաւ, եւ երբ ցոյց տրուեցաւ ամէրթիան կտաւը ուր գրուած էր Գօմիթէներուն մօտ իր անձնական կարեւորութիւնը դրապէս ապացուցանող վկայագիրը, այն ատեն Հաճի Նշան չկրնալով պիտի իր ուրացումին վրայ, ճշմարտութիւնը խոստովանեցաւ հետեւեալ կերպով:

(Շարունակելի)

Ընկ. սարքուած թատերական երեկոյ-
թի տոմսակներու սպառման մասին :
ի գիմաց Աղբ Ընկ. Գործ. Ժողովոյ
(Կնիք)

Վառնա 1906

ԱԶԴ

Վարդանանց ազգային
տոնին և Բարեկենդանի առթիւ
շաբաթ օր իրաւունք չպիտի հը-
րատարակուի :

ՀԱՎԱՏՈՒՄԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպօլ մէրքէդի մահպուս-
հանէսինին պիր գօվաւընտա
մահպուս պուլընան էրմէնի րում
վէ սայիր խրիսթիան 30 քիշի
բէնչէրէնին տէմիրինի չըգա-
րուպ գաչմայա մուվաֆագ օլ-
մուշար տըր. պու կիւն թիւր-
քիա խարիճինտէ պուլընիւրլար
վէ սէրպէսթ տիրլէր : Պու ֆի-
րարիլէրտէն պիրինին ըէվայէ-
թինէ կէօրէ, քէնտիսինէ աթֆ
օլընան ճիւր՝ եալընը սաղ գօ-
լունտա՝ պուլնտան 8 սէնէ ագ-
տէմ Երուսաղէմէ կիթմէսինտէ՝
հաճըլըգ տէլիլի օլմագ իւզրէ
էրմէնիստան աւմասը վէ քէնտի
իսմի եազըլմը օլմասը ըմըլ :

Պուլնարըն էքէրիսի պիւա
մուհաքէմէ սէնէլէրտէն պէրու
մահպուս պուլընուպ, հէր կիւն
էօլիւմէրինի պէքլէմէքտէ ի-
միշէր, զիրա քէնտի մահպուս
աղգատաչլարընտան չօգլաթը
կիճէնին պիր վաղթընտա գօ-
վուշտան չըգարըլուպ գարագօլ
գալըգլարընա կէօթիւրիւլէրէք,
այագլարընա թաշ եախօտ տէ-
միր րապթը իլէ տէնիլէ աթըլ-
մըշար տըր :

Օլ պէտպախտարըն պու եօլ-
տա պիր էօլիւմտէն գուրթուլուպ,
սէրպէստիլէ իւքէլէսինէ այագ
պասմը օլմալարընտան տօլայը
թէպրիգիմիլի վէ մէսէրրէ-
թիմիլի պէյան իտէրիլ :

—Սէրէզ գազասընտա րում
չէթալարըն պիր թագըմ պուլ-
կարլար գաթլ իթմիշ օլմալարը
նիհայէթ ֆրանսըզ զապիթի Ս՝.
Վէրանի մարիֆէթի իլէ թաստիլ
օլընտը : Անկէլ Չաֆէրօլ նամ
պուլկար հօճասը մայիս այընտան
պէրու զայպ ըտը, չիմտի անլա-
չըլտըքի, Բոււլար անը թու-
թուպ, պիր րում խանէսինտէ
գաթլ իտէրէք կէօմիւլլէր, Եու-
նան գօնօլսը տախի մէղքիւր
խանէյէ կիտուպ ճինայէթին ի-
զինի պէլի իթմէմէք իշիւն
թալիմաթ վէրմիշ տիր :

Սքիւպ մահքէմէի ֆէվզէլա-
տէսինտէն 18 պուլկարլար 4 սէ-
նէտէն 10 սէնէյէ գատար գա-
լէպէնտիլիկէ մահքիւմ օլտըլար .
պուլնարտան պիրիսի Ժիմնազիա

տիրէթօրը տօթօր Չիֆթէվ
տիր, իշպու մուհաքէմէտէ հազարը
լըգ վուգու պուլտըլը իշիւն էլի-
լէր բրթէսթ իտէյօրլար :

Թ Ի Ի Ր Ք Ի Ա Վ Ե Մ Ե Ր Ե Ր

Ախապա գըլթասընտաքի սի-
նօր մէսէլէսի թիւրք վէ Մըսըր
հիւքիւմէթլէրի պէյնինտէ շու-
կիւնլէրտէ բէք ալէֆլի հալ քէպպ
իթմիշ տիր : ինկիլիզ—Մըսըր
ասքէրի հարպ թէրթիպինտէ օ-
լուպ հիւճուճա հազըր պուլընի-
յօր : Փարաւոն տատսընը թիւրք-
լէրտէն մուհաֆազա իթմէք ի-
շիւն իքի ինկիլիզ հարպ վաթօր-
լարը կէօնտէրիլմիշ տիրլէր : Ի-
քի հիւքիւմէթլէր պէյնինտէ միւ-
նասէպաթ բէք կէրկին պիր
հալտէ տիր :

Տ Ա Խ Ի Լ Ի Է

Պուգրէշ պանգէրլէրինտէն
միւթէվէֆա էվլօկի Կէօրկիէվին
պիր վասիլէթմամէսի իւզրէ,
պուլկար նարօտնիագ (միլլի)
բարթիսինին ըէյիսի Ս՝. Կէշէվ
Բոււմանիա մահքէմէլէրին հիւքմ
ու իւլմալարը իլէ պիր գաչմի-
լիոն ֆրանգ պիր միրաս ալմըշ
ըտը : Շիմտի պազը պէվաթըն
իտտասը իւզրէ Ս՝. Կէշէվ Սօ-
ֆիա հիւքիւմէթինտէն թահթը
մուհաքէմէյէ ալընմըշ տըր,
կէօեա իպրազ օլընան վասիլէթ-
նամէ սախթէ իմիշ, վէ եպիսօտ
միւթէվէֆա էվլօկի Կէօրկիէվ
քէնտի սէրպէթինի Ս՝. Կէշէվին
նամը իլէ Պուլկարիայա իհտա
իթմէք իսթէմիշ իմիշ, զիրա
պանգէր Կէօրկիէվ բէք վաթան-
բէրվէր պիր պուլկար օլուպ, հէր
հալտէ քէնտի սէրպէթինի սէվ-
միշ վէ բէրէսթիշ իթմիշ օլտը-
շը վաթանընա եանի Պուլկարի-
այա թէրք իտէճէք իտի տէյօր-
լար : Պագաթ պու զաննիլթթը
թաստիլ իտէպիլէճէք պիր գալի
տէլիլ էլան մէյտանա չըգմամըշ
տըր : Շու հալտէ Ս՝. Կէշէվին
բարթիսինէ մէնտուպ օլանլար
տէյօրլարքի՝ ըէյիսիմիլի վէ օ-
նունլէ նարօտնիագ բարթիսինի
լէքէլէնտիլմէք իշիւն իֆթիրա
աթիլօրլար, զիրա չիմտիքի հիւ-
քիւմէթ տիւշմէսինտէ նարօտ-
նիագլար գուլվէթէ կէշէճէքլէր :

—Թիւքքիտ վէ Պուլկարիա
պէյնինտէ թիճարէթ ահտնամէ-
սի թանդիմի իշիւն միւղէքէրէ
իճրասը պապընտա Սօֆիատան
Սթանպօլա մուրախասլար կէօն-
տէրիլտի :

Սուլթան բրէնսի Սթանպօլա
տալէթ իթմիշ իտէտէ, Բրէնս
չիմտիլիք վաղթթ թային իտէ-
մէյէճէկինի պիլտիրուպ, նէղա-
քէթլէ եիւզիւնիւ կէօրմէք իս
թէմէյօրըմ տէմիշ տիր :

—Կէշէլէրտէ Բրէնս հազրէթ-
լէրի օթօմօպիլ իլէ Օրխանիէ

եօլու իւզէրինտէ պիր քէօյտէն
կէշէր իքէն, մէքթէպ չօճուգլա-
րընտան պիրի պիր պէօյիւճէք
թաշ աթուպ, օթօմօպիլին աղգա
ճիհէթինի պիր աղ զէտէլէր :
Չօճուգ իսթինթագա ալընմըշ ի-
սէտէ, առապատա քիմ օլտը-
շըն պիլմէզտիմ տէմիշ տիր :

Հէր քիմ տախի օլսա, Պուլ-
կարիտա մէքթէպլէրտէ չօճուգ-
լարըն թէրպըյէսինէ տըգգաթ
օլընմատըլընա պիր տէլիլ տիր :

Մ Ա Ր Օ Ք Մ Է Ս Է Լ Է Ս Ի

Ալճէզիրատա թէճէմմիւ օլը-
նան պէյնէտտիլվէլ գօնֆէրան-
օը Մարօք մէմալիքինին իսլա-
հաթը իշիւն պիր չօք նօգթա-
լարտա իթիլաֆ հուսուլա կէթի-
տի իսէտէ, էվլէլտէն շիւքհէ
օլընտըլը իւզրէ, բօլիս թէշքի-
լաթը մէսէլէսինտէ իսթիլաֆզու
հուր իտէյօր :

Մարօք Սուլթանը ժանտար-
մա վէ բօլիս թէշքիլաթընըն
հիշ պիր տէվլէթէ իհալէ օլընմա-
մասընը իտտաա իթտի, Ալմանիա
պիր նէվ Սուլթանըն էֆքեարընը
թաստիլլէ շու աղղուլը պէյան
իտէյօր : «պէյնէտտիլվէլ գօնթը-
րօլը ալթընտա բօլիս իտարէսի-
նի սուլթանըն հիւքիւմէթինէ ի-
հալէ իթմէք :» Պագաթ Պրան-
սա Ալմանիանըն պու աղղուլընը
րէտտ վէ գաթիէն ըէտտ իտէյօր :
զիրա պուլնտա քէնտիսինին սի-
նօրտաչլըգ հազլարը վէ խու-
սուսի մէնֆաթթարը նազարա
ալընմայօր : Նէթիճէսի նէ օլա-
ճագ պագալմ :

Ս Ե Ր Պ Ի Ա

Միսաֆիրէթէն Պէլկրատա կիթ-
միշ օլան 5—6 պուլկար մէք-
թէպիլլէր պիր լօգանթատա պիր
թագըմ բանիսլալիսթ սըրպթա-
լէպէլէր իլէ վաղթթ կէշիւմէք-
տէ իքէն, պաչգա միլլիլէթ ֆըր-
գասնա մէնտուպ պիր չօք մէքթէպ
լիլէր կէլուպ, հազարէթ վէ հիւ-
ճուճա պաշլարլար վէ թարա-
ֆէյնտէն գաֆա կէօզ եարըլմագ
էսնասընտա բօլիսլէր նէթիշուպ,
գալկայը թէսքին իտէրլէր :

Իշպու վագաատան տօլայը
Սըրպ մինիսթէրի ալէնէն թէէ-
սիֆինի պէյանլէ, պուլկար մի-
սաֆիրլէրինէ գարչը պու հազա-
րէթի թայիպ իթմիշ տիր :

Սերպիտա պու տէրէճէ
պուլկարլարա զըտտ վէ մուխա-
լիֆ պիր ֆըրգա պուլընտըլը
հալտէ պուլկար—սըրպ կէօմրիւկ
իթթիհատը թէմէլլի օլմալա-
ճագ կէօրիւնիյօր :

Բ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա Վ Է Ե Ո Ւ Ն Ա Ն Ի Օ Տ Ա Ն

Բոււմանիատա, պա խուսուս
Պուգրէշտէ Բոււլարա գարչը

խուսուճէթ բէք ալթմըշ տըր-
Բազար կիւնիւ Պուգրէշտէ պիր
պէօյիւկ միթինիլ թէճէմմիւ իթ-
տի վէ էլէնիլգօզ շիւքէթինէ աղա
օլան պիւլթիւն Բոււլարըն Բու-
մանիատան գօվուճալարընը
հիւքիւմէթտէն թալէպ իթմէք
իշիւն գարար վէրիլտի :

Միթինիլին իշպու գարարըն-
տան սօնրա, էհալի ալայլէ սօ-
գալարը կէշէրէք, Խրիսթօրու-
լիս նամ միլիօնէր իլէ տիկէր 8
րում թիւճարլարըն իխրաճ ի-
տիլմէլէրինտէն տօլայը բօլիս
իտարէխանէսի, էօնիւնտէ մէմ-
նունիլլէթ նիւմայիլի իճրա իթ-
տի :

—Պիր հալատիսէ կէօրէ, կա-
լացտան վէ իպրաիլտէն տախի
պիր չօք րում թիւճարլարը իխ-
րաճ օլընմըշար :

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Է Լ Է

Պրանսանըն եէնի ճուճուրի-
յէթ ըէյիսի Ս՝. Պալիէր էլէզէ
սէրայընա կէօթիւրիլուպ ըէսմէն
մէսգըր ըէյասէթինէ կէշիւլտի-
պիլալէրէ Ս՝. Պալիէր քէնտիսի
տախի Ս՝. Լուպէի խանէսինէ կէօ-
թիւրուպ, սէրայա ալտէթ իթ-
մէսինտէ, վիւքէլա ըէյիսի Ս՝.
Բուլիէ գապիւնէնին իսթիֆանա-
մէսինի թագտիմ իթտի իսէտէ,
եէնի ըէյիսի ճուճուր հէյէթի
վիւքէլայա էմիլլէթի քեամիլէ-
սի օլտըլընը պէյանլէ իսթիֆա-
նամէնին կէրի ալմասընը ըէճա
էյլէտի :

—Տանիմարգա Բրիսթիան գը-
րալընըն ճէնազէսի քէմալը
թանթանա իլէ տէֆն օլընտը-
եիւզտէն զիյատէ հիւքիւմտար-
լար վէ բրէնսլէր հազըր պու-
լընտըլար :

ՅԱԿՈԲ Կ. ՀՃԻ. ԿՍՐԱՊԵՏՅԱՆ

Կը վաճառէ Սօֆիա քաղաքի
վիճակահանութեան տոմսերը :

Գին՝ 1/4ը 3 ֆր. 1/8ը 1,50

Թ Է Ա Թ Ր Օ

Եարըն աղչամ «Պուլկարիա»
սալօնընտա վԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆ-
ԵԱՆ թէաթրօնը վէրիլէճէկի վէ
պիլլէթլէրին «Հայկական» Ըն-
թերցարանտա սաթըլմագտա օլ-
տըլը իլան օլընըր :

Одговорникъ А. Курбетянъ
печпнятъ а Д. Тодоровъ и С-не—Варна

